

մէկ քառորդ լայնքի վրայ. արեւելակողմը սեղան մը կայ, որուն ներքե քաց է կիսաբոլորակ ձևով, և մէթը ու կէս տրամագիծով: Մէջտեղը բոլորակ գունաւոր մարմարին մը, յատակէն աւելի ցած, Առաքելոյն գլխոյն թաղուած տեղը կը մատնանշէ, որուն շուրջը և սեղանին ներքե վեց մշտավառ կանթեղներ կախուած են: Ամբողջը քանդակագործ ճերմակ մարմարէ, իսկ մատուռին պատերը նոյնպէս քանդակագործ մարմարներ են. բայց երկնիւրանդ գունաւորուած, իսկ վերեւի մասը յիմիով պատած է: Մատուռին վրայ զարդարուն գմբէթ մը կը բարձրանայ, եւ դրան վրայ գեղաքանդակ և ոսկեզօծուած կէս մէթրի չափ դուռն ցրցուած բարաւոր մը: 1731ին շինուած է Ս. Գլխաղիբի սատափեայ դուռը Յակոբ անուն վարպետէ մը, ի յիշատակ Կամարակապցի Նազարի որդեաց. Շղթայակիրի օրով:

Սարգիս վրդ.՝ գրիչ Երուսաղեմայ նորագիւտ պատմութեան, 1683ին հետեւեալ կերպով կը նկարագրէ Ս. Գլխաղիբի մատուռը. «... վասն որոյ զգեղեկցութենէ, և պայծառ զարմանակերտութենէ դամբարանի սուրբ գլխոյ առաքելոյն ոչ ոք լեզու կարէ պատմել և ճանել, զի միջի եղեալ սեղանն, արգարե՝ ձեւով և տեսեամբ է յար և նման եօթնաստեղեան խորանին: Նմանապէս և դամբարան սրբազան գլխոյն, որ ի ներքոյ սեղանոյն ոչ այլ ինչ է, եթէ ոչ շնորհազեղ և կենսաբուխ վտակ մի, լըցեալ անմահական փառօք, զոր ճոճանչաձև մարմարոնեայ փորուածովք և մանրաշար բազմագոյն քարամբ զարդարեալ. ունելով դ. կանթեղս մշտավառ շուրջանակի, եւ բ. դրունս, մինն դէպ յարեմուտս, երկայնութիւն յարեւելից յարեմուտս թ. թզաչափ, և լայնութիւն հիւսիսոյ հարաւ է. թզաչափ»:

Քանի որ Գլխաղիբի նկարագրութիւնը կատարեցինք պէտք է հոս յիշել որ ըստ յիշատակարանաց, կ'աւանդուի թէ Ս. Գլխաղիբի առջև և տաճարին սիւնին ներքե թաղուած են Լևոն Զ. ի կիներ Մարիուն և աղջիկը Փեննա՝ որ Լևոնի ազատութենէն յետոյ 1382ին, Եգիպտոսէն Երուսաղէմ կ'ուղևորին, և ժամանակ մը բարեպաշտութեամբ կ'ապրին Ս. Յակոբեանց վանքին մէջ և երբ կը վախճանին, անոնք կը թաղուին տաճարին յիշեալ տեղոյն մէջ. այս պարագան ձեռագիր յիշատակարանները մատնաւորապէս Ս. Աթոռոյ պատրիարք Մարտիրոս Ղրիմցին՝ կը վկայեն, նաեւ Միաբանական աւանդութիւն մը եղած է եւ տե-